

408 №163

ՄՆ. ԳՈՒԱԶՅԱՆ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ЗООГЕОГРАФИИ  
Академии Наук  
СССР

# ՎԱՍԻԼ ՄԱԹՎԵՅԻՉԻ

## ԴԱՎԹԱՐԸ

ՊԱ.ՑԿՐՈ.ԶՈ.ՐԴ.

Ս. ԽԱՆՈՅԱՆԻ առաջնաբնույթ

«Մե որ կար, զլիիս փամփերով Փառ  
ելին կանչում, իժում զառա Փարսիդ, իժում  
աղա Փարսիդ, հիմք Վասիլ Մաթվեյիշ»:

«Վանդած ողոխ» Կ. Սունգուլյանի:

291.99  
9.95

ԹԻՖԱՆԻ  
1927

01 JAN 2009

БИБЛ 19 NOV 2009  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

N163  
A  
Д 1342  
891-99  
9-95

ՄՆ. ԳՈՒԱԶՅԱՆ

# ՎԱՍԻԼ ՄԱԹՎԵՅԻՉԻ ԴԱՎՅՈՒՐԸ

ՊԱՏԿԵՐԸ.ԶԱՐԴԻ

Ս. ԽԱՆՈՅԱՆԻ առաջաբանով

«Մե որ կար, զիմիս փամփելով Փառ  
ելին կանչում, իժում զառա Փարսիդ, իժում  
աղա Փարսիդ, հիմի Վասիլ Մաթվեյիչ»:  
«Յանձնած ոջախ» Գ. Սունգուկյանի:



ՖՀ-33205

Թ.ԲԺ.Խ.Ա  
1927

2666

032013

Տ Տ Տ Տ Տ



60388-67


Հ Ա Հ Ա Հ Ա Հ Ա

Պատվեր № 281

Գլամիլիս № 709

Տիրաժ 1000

Թիֆլիս, տպ. «Զարյա Վրաստակա»-ի, Ա. Ծուլուկիձելի փող. № 4.



ՄԱԿԱՐԴԱՅԱՆ

## ՄԱՅԱԿ ԳՈՒԼԱԶՅԱՆ

Գուլազյանը յերիտասարդ չե հասակով, նա տարիքն արած մարդ ե, աշխատանքի յերկար տարիներով ակոսված ճակատով:

Նա ծնվել է 1878 թվին մի չարքաշ մշակի ընտանիքում տղիտության միջավայրում: Իսկ հնում տղիտության միջավայրը մի այնպիսի վիճ եր, զորից շատ քչերն ելին գուրս գալիս: Դպրոց, կրթություն գաղափարները այն միջավայրին, զորտեղից յելել ե Գուլազյանը, ոտար ու խորթ ելին: Ի՞նչ եր 70--80 թվականների ծնողների նպատակը իրենց վորդոց նկատմամբ.—տերտեր, տիրացու, վաճառական: Գուլազյանը իր արդի դրությամբ պարտական ե ավելի իտեն, քան ծնողական դաստիարակության:

Աղքատի որը կտրվի. զռոով, կրվով յեթե մի ծխական դպրոց ավարտեր, մեծ բան եր: Նյութական նեղ դրությունը տղիտության հետ ծայնակերով, ստիպում ելին ծնողներին՝ դուրս բերել իրենց զավակներին նույնիսկ ծխական դպրոցներից ու տալ դուքնի աշկերտ «մարդ դարձնելու» բուռն ցանկությամբ վառված:

Գուլազյանը մի կերպ ծխական դպրոցն ավարտելուց հետո Թիֆլիսում մտնում ե արհեստավորաց դպրոց փականագործական բաժնում:

Այնտեղ ավելի շուտ զրբեր ե կարդում և զրականությամբ տարվում, քան արհեստ սովորում և վերջը զրկից զրաշարի խորհուրդով մտնում ե տպարան զրաշար դառնում:

«Իմ արհեստի—զրաշարության ամբողջ ընթացքում, ասում ե Գուլազյանը իր ինքնակենսազրության մեջ, յես յերբեք չեմ կտրվել զրականությունից: Քաղաքականությամբ չեմ զրաղվել, բայց տարվել եմ զեղարվեստական զրականությամբ»:

Հնում շատ փորձեր ե արել վոտանավորներ զրելու, բայց նրա զրվածքները և այն ել խորհրդացին իշխանության որոք զրվածքներն են լույս տեսել զիսավորապես «Մարտակոյ» թեր-

թում, վորոնց ժողովածուն և ներկա զրբույկում հավաքածն ու հրատարակածը:

Գուլազյանի այս վոտանավորները «բանաստեղծություններ» չեն, սրանք Գուլազյանի հանգավոր դիտողություններն են ու հոգեբանական դրություններ այն մարդկանց, վորոնք պրոլետարիատի դիկտատորայի որոք զրկվեցին իրենց ունեցած վաղեմի փառքից, կյանքից, կեր ու խումից, ունեցած-չունեցածից...

Գուլազյանի վոտանավորները յեթե ժամանակագրական կարգի վերածենք, կտեսնենք խորհրդային իշխանության հաստատման աւագին որերից մինչև մեր այսորը տեղի ունեցած դասակարգային պայքարի ու նրա արձագանքի իսկական պատկերը: Գուլազյանի զրվածքներում տեսնվում են կապիտալիստի, նախկին վաճառականի, կամ ինչպես ընկ. Գուլազյանն ե ասում, «կուպեծի», տերտերի և այն խափերի հոգեկան ապրումները, վորոնք մեր որերում համարվում են կյանքի խորթ զավակներ:

Գուլազյանը թեև առանց պրետենզիաների, բայց մեր կարծիքը միանգամայն ճիշտ գծերով տալիս ե այն միջավայրի տրաունչերն ու դժգոհությունները, վորոնք կյանքից վտարած, այսոր գեղերում են մեր իրականության մեջ իբր ավելորդ, պարագիտ, անվետք տարրեր:

Բանաստեղծը հին աշուղական ծեռվ ե հյուսում իր ասեմբեր և խիստ աղդված նրանցից, մատնելի յե մանավանդ թիֆլիսեցի բանվորներին իր թիֆլիսյան կոլորիտով, համով ու հոտով:

Ընթերցողի առաջից անցնում են մի շարք մարդիկ. յերեմինի հեղինակություններ, վորոնք այսոր ջրատար ու գործի անընդունակ, մի տեսակ դաս են հանդիսանում բանվորների համար իրենց յերեկով ու այսորով իրենց անցյալով ու ներկայով:

Ի՞նչպես յեղավ, վոր յերեկով «խելոր աղան», «հմուտ վաճառականը», փառահեղ մորուքով ու ատլասի փարաջայով տերտերը, «յերկյուղած» յերեցիովն ու «բարեգործ տիկինը» այսոր խունացած, խղճուկ դրության հասած, զինաթափ ու նյութապես փետրաթափ, ել վոչ մի հեղինակություն, վոչ մի հարգանք չեն վայելում վոչ վոքից:

Ու վո՞րան վողորմելի յեն:

Յերբեմնի կյանքի տերերը դեն շպրտվելով հասարակական կյանքից, ինչպես ասում են՝ շրջանառությունից, այսոր անհարակ ու ապիկար վիճակում, վոչ մի գործի չեն կարողանում կպչել: Բայց չե վոր յերեկ նրանք հպարտ ու գոռոզ, խրատներ ելին կարդում, կյանքի «դասեր» ելին տալիս «հասարակ» մարդկանց, իրենց կամակատարներին:

Յեվ այդ «հասարակ» մարդիկ այսոր կյանքի տերը դառնալով, աշկարա տեսնում են, վոր իսկապես իրենք են յեղել կյանքի կառուցողները, տերերին ակամա շռայլ ու ճոխ կյանք տվողները, վորոնք սոցիարական պայմաններից դրդված, յեղել են կյանքի ստորին աստիճաններին: Յեվ այսոր կյանքի վերին աստիճաններից նրանք տեսնում են իրենց աղաների, խանումների վողորմելիությունը, նրանց բացարձակ ապիկարությունը:

Գուլազյանի զրվածքը իբր ինքնաշխատ և ինքնույս մի բանվորի զրական օտեղծագործություն, վողունելի յե և խրախուսանքի արժանի: Յեթե մի զրաշար, վոչ մի կրթություն չունեցող բանվոր կարողացել ե տալ անմիջական կյանքի ճշգրիտ դիտողությունները և կարողանում ե իր տողերով ճուզել ընթերցողներին, նշանակում ե նա շնորհալի մարդ ե: Բայց այդ շնորհալիությունը կյանքի ճժմիչներում հուփ եր յեկել տասնյակ տարիներ ու այսոր միայն կարողանում ե լույս աշխարհ գալ, տալով շահագործող տարրերի զզվելի կյանքի ու այդ կյանքից զրկվելու կենդանի ու յումորով հարուստ հանգերը:

Մենք համոզված ենք, վոր այս զրբույկում հավաքած վոտանավորները իրենց անմիջականությամբ ավելի ընդունելի յեն լինելու: Սրանք ավելի հասկանալի յեն, բան շատ «բանաստեղծություններ» վորոնք իրենց «զեղարվեստական արվեստականությամբ» ավելի հրող են, բան համակրելի:

Գուլազյանը թող «բանաստեղծ» զինի, թող նրան համարենք աշուղ: Աշուղը ժողովրդական անմիջական կյանքի յերգին ե: Խակ կյանքի դիտողության անմիջականությունը գնահատելի յե և ընդունելի աշխատավորական լայն խավերի կողմից:

Գուլազյանը այդ մասսաների յերգին ե, նրանց աշուղը:

Ա. ԽՍ.ՆՈՅՅ.Ն.



## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն ժողովածուի մեջ զետեղված բոլոր վոտանավորները  
թերթերում տպագրված ելին բուն Թիֆլիսի բարբառով, բայց  
վորովհետեւ այդ բարբառի մեջ գործածվող բազմաթիվ վրացա-  
կան յեվ պարսկական բառերը մատչելի չեն դարձնում գրվածքը  
ներկա ընթերցողների մեծամասնության համար, ուստի առան-  
ձին գրքով լույս ընծայելիս նպատակահարմար դատվեց՝ վորքան  
հնարավոր և հեռու մնալ նման բառերից՝ թողնելով միայն վե-  
րոհիշյալ բարբառի արմատը:

### ՇԵՐԿՈՒՄԱԳՐԻ

Հոր հոգի,  
Որոսշ յեւ գոյի ու հինգ ամիս,  
Անուան ացիցացին,  
Հոր Տիր Տիգրան ինք անջու փրա  
Բան շեւալ  
Ես սովետիցացին:

~ Եւ նոյն չեւ,  
Անցած ու հայուս Տիգրանից  
Եւ կոյրդի յեւ չուցին,  
Հիմք ունի Եւ չեւ անու,  
Ան բորք Եւ ճան վրայի ա:

թե՞ առաջ երեք բաշխիչը  
Հայուս չերդէ քայլ ա,  
Դիմու Տիգրան ունի Եւ Եւ,  
Տարդան պարզացացին:

Տես յերես 42.



## ՍՊԵԿՈՒԼՅԱՆՏԸ

(Նվեր Գ. Փ. ին)

Սպիտակ հացն ու կարմիր դիմին  
Մեզլուխ նըրա սուփրի փանդ ե,  
Խիզիլալա, դոշ ել ունի,  
Չունքի թաքուն սպեկուլյանտ ե:

Ամեն շափաթ քեփ ե սարքում,  
Խասիաթով դարդիմանդ ե,  
Առանց հաշիվ փուղ ե միսում,  
Չունքի թաքուն սպեկուլյանտ ե:



«Աշխատանքին» հաշիվ չկա,  
Միլիոնով փուղ կաշխատե,  
Նըրա ճակտին քրտինք չի գա,  
Չունքի թաքուն սպեկուլյանտ ե:

Ինչոր ապրանք ունի պահած,  
Դիմ գողնովի կանորաբանդ ե,  
Գեղնի տակ ե առնում-ծախում,  
Հարամզադա սպեկուլյանտ ե:

Միշտ ել մոդնի շուր ե հաքնում,  
Կատիլինկով զուքած ֆրանտ ե.  
Գիշիրնիրը կլուբ ե գնում,  
Ցերեկնիրը սպեկուլյանտ ե:



Խոճիկ-մոճիկ չե իմանում,  
Բանվոր խոմ չե, աղա մարթ ե,  
Պրավեզիեն բիջն ե տանում,  
Չունքի ինքը սպեկուլյանտ ե:

Լավ մարթու ել անուն ունի,  
Հենց զիդում ին «կամերսանտ» ե.  
«Զարչի» խոսքը չի ընթունի,  
Ամա թաքուն սպեկուլյանտ ե:

Նըրա կնգա շուրն ու զարթը  
Դիմ մախմուր ու բրիլիանտ ե.  
Երկու կնիկ ել ունի մարթը,  
Չունքի թաքուն սպեկուլյանտ ե:



Քեփ անելու տիզն ել զիդե,  
Գաստիննիցա «Որիանտ» ե.  
Հարուրներով միխս ե տալիս,  
Ի՞նչ ե կորցնում, սպեկուլյանտ ե:

Միր քախկցի չգիդենաք,  
Ինչոր եկած եմիգրանտ ե.  
Երեք գուգնի բիջ եր մենակ,  
Եսոր թաքուն սպեկուլյանտ ե:

Նրա սեկրետն ել շուտ կու բացվի,  
Վիրչը խոմ Մետեխի բանտ ե.  
Ենդի պիտի նստի, լաց լի,  
Չունքի թաքուն սպեկուլյանտ ե:





## ՊՐՈԼԵՏԱՐԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱ

Երնեկ կուտամ են որերին,  
Յիփոր փուղն եր տերն աշխարքի,  
Ու Ռուսեթի հացի գինը  
Զուրս կապեկ եր մե գրվանքի:  
  
Յիփոր մարթը գրոշի համա  
Կինք կու մաշեր, ախ կու քաշեր,  
Յիփ Ռուսեթի մե մանեթը  
Գրանիցումն ել մանեթ աժեր:  
  
Յիփ կուպեծը իր պատենտով  
Անուն ուներ ու մինձ պատիվ,  
Յիփ միր քախկում ջեր չեր բացվի  
Եսքան բլոմա կոռպերատիվ:  
  
Յիփ նոքարն ու պրիկաշշեկը  
Եսորվա պես հպարտ չեյին,  
Ամեն մարթը իր տիդն ուներ,  
Մինձ ու պատիկ կու ճանչնեյին:  
  
Յիփոր սալդաթ, գարադավոյ  
Մինձավուրին պիտի չեստ տար,  
Յիփ կար պրիստավ, ակալոշնիկ,  
Գուրենատոր, պոլիցմեստար:  
  
Յիփ ամեն մարթ դուլու կոներ  
Իր հավատին ու իր ազգին,  
Զինովիկը թաքավուրին,  
Փեշաքավուրն իրա դազգին:


Ավսոնւս, ավսոնւս հին պրավիլեր,  
Հին որիրը գնացին, կորան,  
Նըրանց տիղը հիմի ունինք  
Պրոլետարի դիկտատուրան:

Կուպեծնիրս տանուլ ավինք,  
Ցանզիշ եկանք, արինք բեսար,  
Վաճառական ժողովրդին  
Ել չին գցում մարթահետար:

Եսոր մենակ բանսվորնիրն ին  
Տիղավուրվի սուփրի ծերին,  
Ել միզ համա բան չթողին,  
Դիփ վիկալան իրանց ձեռին:

Յերգրի տերը նրանք ին հիմի  
Ու ջոգում ին չարն ու բարին,  
Եստու եղննս տերութինը  
Նըրանք պիտի կառավարին:

Անիծվեր են վայենորեն,  
Վուր աշխարքը սաղ չքանդեր.  
Թաքավուրն ել դժուխք մանի,  
Վուր միզ եսենց թողից անդեր:





## ԵԳԵՂԵՑԻՆ ԿՈՒՏՐԱՅԱՎ



Քոռ մղղսին թոկը բռնած՝  
Քաշում եր ու զանգ ածում,  
Ամա ձենը ել չեր մտնում  
Վուչ մե մարթու անգաճում:

Իրիցփուխը մում եր ծախում,  
Առնող չկար՝ մուշտարի,  
Ել չին հավտում, վուր մումն ենդի  
Մեռելին ե լուս տալի:

Տեր Բարթեղը ժամի դռան,  
Տերողորմիան իր ձեռին,  
Ուշունցնիր եր տալիս մտկում  
Միր քաղաքի մինձերին:

Տեր Բարթեղի են հաստ վիզը  
Դուս կորեցին անդանակ.  
Վուչ մեռել կա, վուչ կնքվատեք,  
Վուչ ել բլոմա գանձանակ:

Կորավ պատիվ տեր Բարթեղի  
Սիվ ու երգեն փարաջի,  
Քելեխներից դարդակ նստից,  
Մընաց առանց իլաջի:



Տեր Բարթեղի են հաստ փուրը  
Հիմի մվ կու ճանանչի,  
Խաշամի տիղ բակլա կուտե,  
Սարդինկի տիղ՝ կանանչի:

— «Ե՞ր, մղղսի, դեր արի,—  
Զեն ե տալի Բարթեղը.  
«Նեքսիվ գնա եգեղեցի,  
«Հանդցրու վառած կանթեղը:

«Հերիք ինչոր զանգը տիր,  
«Խոմ աեսնում իս զոռ չունե.  
«Զանգակն ել ե կորցըի ձենը,  
«Դա ել երգար որ չունե:


«Մինք ել եստի անմիղ տիղ ինք  
«Դառնում իշի մարտիրուս.  
«Գընամ գլխիս չարեն տեսնիմ,  
«Դարման անիմ դարդերուս:



«Դուն ել գընա, իրիցփուխ ջան,  
«Դուն ել հանդցրու ճաղիրը.  
«Հերիք ինչքան տակովս արիր  
«Եգեղեցու վուղիրը:

«Կողակ դուռը, քոռ մղղսի,  
«Դուն ել գլխիդ ճար արա.  
«Եգեղեցին կուտը ննդավ,  
«Ել իսեր չկա, զարար ա:





## ՈՒԼՏԻՄԱՏՈՒՄ

Յակուլիչի տունը եսոր տուն ե դառի թամամ սուքի,  
 Զե կարացի մե խոսք ասի խիղճ մարթն առանց առտասուքի,  
 Պապիրոզը ձեռին բռնած՝ ման ե գալի զուքած զալում,  
 Կընիկը կի մարթու ահից կուչ ե հկի, ձեն չե հանում:  
 Ել չկարաց շատ համիերի ու ցած ձենով հարցըրուց մարթուն.  
 — «Ի՞նչի՞ ետենց նիզացիլ իս, խոմ չի՞ս տանուլ տվի կարտում:  
 — «Ի՞նչ իս խոսում սարսաղ-սարսաղ, ի՞նչ կարտ, ի՞նչ բան, ի՞նչ  
     իս ասում,  
 «Ել չի անցնի շատ ժամանակ փուղ չի մընա ել իմ կասում:  
 «Փարրիկում բանվորնիրը ելի ինչոր բան ին անում,  
 «Եռու տարիի ձեն ին լսի, հին տարիի փով ել չին բանում.



«Դուս ե եկի թազա զեկրետ՝ հարուր պրոցենտ ավել տալու,  
 «Չիմ իմանում եսու եղնեն ինձ դադումը ի՞նչ ե մնալու:  
 «Դեկեզատ ին զրգի ինձ մոդ, են ել վուրին շատ իմ տառում,  
 «Նըրա բերնով ապմպրիլ ին ու տալիս ին ուլտիմատում:  
 «Յա տարիի փով պիտի ստանան, մինձ բաժինը իրանք տանին,  
 «Յա փաբրիկես թողնիմ նըրանց, վունցոր ուղին ենենց անին:



60988-67

## ՇՈՒՐ ՏՎԱՌ ԱՇԽԱՐՖԸ

Երնեկ ըլեր, վուր մեռնեյի  
 Մե տաս տարի սրամեն աղաք  
 Ու ես որում չտեսնեյի  
 Ես միր գոված թիվլիզ քաղաք:

Նամուս, արուռ, խիղճ ու ամութ  
 Դիփ միանա վիրացիլ ին.  
 Պառավիրը ջահելացի,  
 Ջահինիրը ծիրացիլ ին:

Կնիկարմատը պապիրոզով  
 Ման ե գալի տրոստը ձեռին,  
 Մարթը բերնում մաստակ գցած՝  
 Մտիկ կոմէ տան գուրձերին:

Կնիկն երեխա ել չե բերում,  
 Զի կամենում երգար պառկի.  
 Բիչ ե մընում, վուր ետ բանն ել  
 Տըղամարթու վզին շալկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ՊՈՏՈԽԱՅԵԴԱՆԻ  
Ակադեմիա Խոր  
ՀԽՍՀ



Մարթը կնոգա կոմքն ե անում,  
Նըրա զուլն ու ճուրտ ե գառի,  
Կնիկը մարթու աճկի առչիվ  
Ռւրիշ մարթուն խոսք ե տալի:

Մարթու տալու ախչկիրքը  
Իրանց մորը խրատ ին կարթում,  
Թե զունց պիտի ժաժ դա կնիկը,  
Վուր սիրիլ տա զլուխը մարթուն:  
  
Վարժապիտը կլասում նստած,  
Ռւչենիկից դաս ե ստանում,  
Թե Պարիժը վուր յերզրումն ե,  
Ինպլիսում թէ Փրանզստանում:  
  
Գիղնականը բաղալ դառավ,  
Սպեկուլյանտը անուն հանից,  
Ել ինչ լավ բան պիտի սպասինք  
Եսուու եղնեն ես աշխարից:



### ՓՈԿՈՒԶՆԻԿԸ

Յիս մե ուստա մարթ ելի ձանչնում,  
Վուրի նման ոչով չկար.  
Գրագ զուքայի, թե միր քախկում  
Մե փոկուզնիկ նրա մոդ զուքար:  
  
Վուր ուզենար մե որվա մեջ  
Կու երեար քաստուն ոանզի,  
Զեոին ուներ հազար փեշակ,  
Ամեն բանը կանար սարքի:



Հին ոեժիմի ժամանակը  
Զինովինիկ եր ինչոր սուդում,  
Ով որ հիդը գուրձ ունենար,  
Դիփունանցից քրթամ եր ուտում:

Յիփոր եկավ մենշեփմը  
Են անիծած տասնութ թվին,  
Զինովիկը ռանզը փոխից,  
Կամիսարի տիդ ել տվին:

Ու յիփ տեսավ, վուր զաղումը  
Նըրանց որով ուժը շատ կա,  
Ելի իր հին փեշակ բանից,  
Ելի քըրթամ, ելի վզյատկա:

Վըրաստանում իլիկո յեր,  
Հայաստանում հերոս Խեչան,  
Թուրք ել գառավ մեքիչ վուխտով,  
Յիփոր զընաց Աղբքեջան:

Ելի գուզե ռանզը փոխի,  
Ելի շատ ե չալիշ զալի.  
Մուսավաթին, մենշեփին  
Ու դաշնակին ուշունց տալի:

Ման ե զալի եստի-ենդի,  
Սըրանըրա վուտն ե լիզում,  
Ավտոմոբիլ գուզե ճանդի,  
Վուր բոլթա տա միլ թիփլիզում:



## ՊՐՈՓԵՍԻՌՆԱԼ ՍԱՅՈՒՁԸ



Ինչոր սայուզ մողոնեցին,  
Տերն ազատե նըրա ձեռից.  
Խիճ ուստեքանց աշխատանքը  
Կես արավ ու անկրակ երից:

Աշկիրտ բոնիւ ճամփու դնիլ  
Դիփ սայուզի կամքով պիտի.  
Քու փեշակի զոռութինը  
Նա ե խարար, դուն չիս գիդի:


Զամազիրի շատն ու քիչը  
Են ել ենդի պիտի վճոխն,  
Ու թե աշկիրտ ճամփու դրիր,  
Տիս թե ինչքան պիտի գջլին:

Ես հիմլիկա աշկիրտնիքն ել  
Ենենց մինձ ին լիզու հանում,  
Վուր իրանք ին, կոսիս, մենակ  
Խաղեյինը քու դուքանում:

Քու ասածը նա չե լսում,  
Ելի ինքն ե քիզ զաս տալի,  
Թե ավելնուըթ խոսկ ել տսիր,  
Չեռած սայուղ ե վազ տալի:

Ել սեկրետար, սրեգսեղատել,  
Ել կոնֆլիկտանի կամիսիս,  
Լիկվիդացիոն, են ել նազդը,  
Վունց ըազարոշկա, վունց նիսիս:

Աշկիրտը վուր ահ չունենա,  
Աւստեն չըլի նըրա տերը,  
Ել ինչ կոնե նա են աշկիրտ,  
Վունց կու տեսնի նըրամեր խերը:



Երնել են որ, յիփ աշկիրտը  
Կուտեր մեզլուխ սիլա-մուշտին  
Ու հինգ տարի անջամազիր  
Հուլուղ կոներ իրա ուստին:

Համ բջի պես ուստի տանը  
Պոլ կու սրվեր, ջուր կու բերեր,  
Համ փեշակ եր սովորամ գուքնում  
Ու վիրչն իրա հացի տեր եր:

Հիմքից քանդվիս, անդեր սայուզ,  
Հնարողի զոււխն ել սատկի,  
Վուր աշկերտին երես ալից  
Ու միր ջիրը պիտի դարտկի:



## ՆՈՒՐ ՄՈԴՆԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Յակուլիչն ու իրա կնիկը նստած իրիզնահացի՝  
Խոսում ելին գևից-դենից՝ մասահաթնիր անելով.  
Յակուլիչի կնզա լիզուն չարի եր զափ ջրազացի,  
Խոսում եր ու խոսում անվիրչ մարթու զահին տանելով:

— «Այ մարթ,—ասավ կնիկը մարթուն, — միր Սոնիչկեն հասիլ ե,  
«Ժամանակ ե նըրա համտ մե փեսացու զթնելու:  
«Ամա խոսկս ուրիշ տեսակ փեսացուի մասին ե,  
«Դուրին պիտի մինք լայիդ անինք առանց նըրան փանելու:


«Ես զլսեմն պիտի ասիմ՝ կուպեծ փեսա չիմ ուզում,  
«Կուպեծնիրը կամաց-կամաց զուս ին զալի մողեմնն,  
«Ինժեների ու զոխտուրի հարկավուր չե չին-ուսում,  
«Տեր աստուծը հիու տանե քլեսա աղվոկատեմնն:

«Երկու ախչիկ մարթու տվինք—ադվոկատին, կուպեծին,  
«Հենց իմացանք փեսեք զթանք, համ շատ ելին նազ տնում.  
«Կուպեծ փեսեն զուղ զուս եկավ, բիրթը տարան, զուքեցին,  
«Աղվոկատը միրք ե ծախում Դեղերտիրկի ըազարում:

«Ետ մարթկերանց ել չիւ՞ հավում, զբանց հեղնից մանչզաս,  
«Աշխատազն և հիմի մողում՝ ձևսին բռնած փեշակով.  
«Զոգի զբանցմեն մե լավ ոմքին, պըսակիմ իմ տիչկաս,  
«Փող-բաժինքն ել ինչքան զուղե, թեզուղ լիքը մեշնկով:»



Յակովիչի քունն եր տանում, ել չեր լսում կնդանը,  
Չունքի մեքիչ շատ եր խմի, զոռ եր տիփ Բախուսին.  
— «Այ կնիկ,—ասավ,—զողինք զցի, հերիք ելավ եղքանը,  
Եսու մասին մարթ ու կնիկը միշտ զողինքում կու խոսին:



## ԵՐԵԳ ՈՒ ԵՍՈՐ

Յիս աշխարքում շատ իմ ապրի, իստակ պառզիլ իմ,  
Ախտանասուն ու հինգ տարի կինք իմ ունեցի.  
Շատ գարմանքի բան իմ տեսի, զիփ համփիրիլ իմ,  
Ամա ինչոր հառ տեսա, ևս չընթունեցի:

Եսոր են չե, ինչոր երեկ, են զիփ երազ եր,  
Ինչոր տեսանք, ել չինք տեսնի, նըրանք մեռած ին.  
Ռեոլուցիին սելագի պես եկավ զիփ սրվից  
Աւ Քուն ածից, վունցոր քուչի ախպը զեն ածին:

Ասծու տանը պաժար տվին, իրան սպանեցին,  
Կրոնքը վուտի տակ զցեցին, արին մասխարա.  
Հինը, կոսի, ել չինք տգույն, թող կորչի զընա,  
Եսու եղնեն նուր աստուծ և ու նուր աշխար ա:

Երեսնիրը չին խեչ անում, ժամը չին զընում,  
Ել չին լսում աերտերների խաղին ու տաղին,  
Նուր ծնածին չին մկրտում ավագանումը  
Աւ մեռածին անպատարագ, անժտմ կու թաղին:

Ել չինք զիգի ինչ հավախ ինք - թուրք թէ քրիստոնա,  
Ո՞վ և մինձը, ո՞վ և պատիկ, ոչով չե խարար.  
Տուտոցնիրը խելոքներին խիլք ին սովորեցնում,  
Խելոքնիրը տմեն բանից դառան բեխարար:

Աղեքն իրանց զուրուզեքի նոքար ին դասի,  
Վաճառական մարթը եսոր ապրիլ չե կանում,  
Կնիկը մեզլուխ զիշեր-ցերեկ գուսն և թուե գալի,  
Մարթը տանը կնզա համա փախան և կարում:

Խալխի լիզուն խառնբվիլ և, կոսիք նուրմեկանց  
Բարելոնում պիտի շինին թաղա աշտարակ.  
Զակրայկոմ, Գորիսպոլկոմ, Ցեկա ու Տեկա,  
Գլուխն մեռնի թե եստոնցմեն մե բան հասկանաք:

Տերտերնիրը խալխի առչիլ միզա ին գալի,  
Փարաջեքը դեն ին ածում, զլիխին ձար անում,  
(Շուն շանգուրթիք, թե զիզելիք սուտ և աստուծք,  
Ինչկի եսոր ինչի ելիք խալխին թալանում):

Աշխարքն ել և փոխվի, կոսիք, ել են աշխարք չի,  
Ամառնիրը ձուն և գալի, ձմեռը շուք անում.  
Գիղնականը հացի համա փեշակ և սովորում,  
Յիս ել զլիխս զոռ իմ տալի ևս իմ դոքանում:



## ՀԱՏԵՐԻՅ ՄԵԿԸ

Շատ մողիկ վախաի իմքին իմ ասում,  
Յիս թաքավուը նստած եր թախտին,  
Յիս ամեն մարթը քախկում թե զիզում  
Երնեկ եր տալի կուպեծի բախտին:

Միչի փողոցում դուքան ունեյի,  
Չեսիս յարազն եր մկրատ ու արշին.  
Խամ մուշտարիք ել շատ ելին գալի,  
Լավ եյի քերթում զեղացոց կաշին:



Մե լավ պրիկաշչիկ ունեյի դուքնում,  
Ղոչաղ եր, խունար, հալալ ու խստակ.  
Նա եր իմ դուքնի հոքի ու շունչը,  
Իմ առուտուրի պահապան հրիշտակ:

Մինձ պատերազմը իմ բանը դրստից,  
Մեկին տաս ու քսան աշխատանք արի.  
(Երնեկ թե ետենց շուտով չպրծներ  
Ու քաշեր ելի մե տասը տարի):

Ամա միր աստղը են վախտը սիվցավ,  
Յիփ սուս սալգաթը կարմիր աստղ շինից,  
Դուքան, առուտուր դուս եկավ մողից  
Ու դարդակ մնացի մկրտարշինից:

Բանվոր, ծառայող հանեցին լիզու,  
Չուղեցին ճանչնա խաղեցին ու տեր,  
Արթարն ու դրուստը դուս եկան իրանք,  
Միր ասածնիրը դիփ ծուռ ու սուտ եր:

Իմ պրիկաշչիկն ել, են ասծու գառը,  
Վուր բացը ձենով հիգս չեր խոսում,  
Հիմի մեկին տաս ջուղար ե տալի  
Ու իմ ասածին իսկի չե լսում:

Սկսից առուտանիր ուշանալ դուրձին,  
Իրիզուննիր ել վաղ եր տուն զընում,  
Մուշապիներին չեր կանչում նեքսիվ  
Ապրանք սաղցնելուն՝ զըլուխ չեր դընում:

— «Սահաթի ութին պիտի դամ դուքան,  
«Չուրսին ել, կոսե, շաբաշի վուխտ ե.  
«Ութ սահաթ պիտի ծառայիմ, կոսե,  
«Սայուղից եկած պրավիլի թուխտ ե:



«Դուքանն ել ինչքան աշխատանք ունե,  
«Տաս պրոցենտ, կոսե, ինձ պիտի հասնի,  
«Դուն ել, ասում ե, լավ պիտի վարվիս,  
«Ուշունցիր չտաս ինձ բեղաբրագնի:

«Տարեն մե ամիս ոտպուսկ իմ գնում,  
«Պոխի ջամագիր պիտի տաս, կոսե,  
«Թե մարթ իս ուզում ժամանակավուր,  
«Սայուղը գնա ու ենդի խոսե:

«Թե վուր պատահից յիս հիվանդացա,  
«Պառկեցի տանը մե քանի ամիս,  
«Դոխտուրն ու դիղը քու ծախսով կուլի,  
«Ինչկի լավանամ դուն պիտի ինսամիս:

«Թե գուղիս, կոսէ, ինձ ճամփուր դնի,  
«Լիկիդացիոն վջարիս պիտի.  
«Թե չե կու ծախին վեշիքդ գուքնի,  
«Ետենց ե հրաման միր նարկոմարուդի»:

Մազիլս բիզ-բիզ կանզնեցին զիխիս,  
Գժվեցա լամիս ու դամբլա ննդա.  
Միզ բաժնիլ ուփրո գժար եր դառնում,  
Քան թե ըազվողը մարթու ու կնդա:  
«— Զիմ ուզում, ախզեր, ել դուքան, ասի,  
«Ել չիմ կամենում առուտուր անի.  
«Մարթը նա կուլի, ով եստու եղնեն  
«Բաց անի դուքան ու չփոշմանի:



## ՎՈՒՆՑ ԵՅԻՆ ԴԱՐՆՈՒՄ ԽԱԶԵՅԻՆ

Ալեքսանդրեն՝ Մակարիչի պրիկաշչիկ եր քսան տարի,  
Ինչ թուք ու մուր ասիք նըրան խաղեյինը չեր տալի,  
Իրա գուրձին խիստ մուղայթ զուլուդ կոներ սրտալի,  
Մակարիչը ջամագիրն ել որինավուր չեր տալի:  
Դայն եկիլ եր Ալեքսանդրին, թե քիչ գուրձին ուշանար,  
Մակարիչը ետ խիխճ մարթուն ուշունցիր եր գուր կուտար,  
Ել շանվութի, ել ավանակ, հայվան, թամբալ, աննամու,  
Ու հորն ու մոր կուբուքն ել զերեզմանում շուռ կուտար:  
Ալեքսանդրեն՝ Մակարիչի ճուրտ եր դառի, կուչ եկի,  
Չեր իմանում վունց աղանդիկը ետ գապանի ձեռիցը.  
Պարապ մնալուց վախենում եր, զըլուխ չուներ քուչեքի,  
Համ ել փուղը խիստ եր սիրում, զիժ եր նըրա սերիցը:  
Շատ համփիրից Ալեքսանդրեն, շատ բաներին դիմացափ,  
Ամա վիրչը հանգը զթավ ու սեկրետն ել իմացափ.  
Թաքուն դուքնից ապրանքնիրը քիչ-քիչ իրա տուն ըերից,  
Փուղ շինից ու ել չեր վախում Մակարիչի ունքերից:

Մակարիչը ինչքան շար եր, մի ենքան ել ավանակ,  
Չեր հասկանում վունց եր ըլում իրա գուքնի զարդկումը.  
Մեկ ել տեսավ կուտր ննդավ, անունն ելավ խայտասակ,  
Համ գուքանը զընաց ձեռից, համ ել մընաց պարտքումը:

Ալեքսանդրեն իրա համա ջեր մե բուդիա բաց արից,  
Եժում բուդին զուքան զառավ են գուքանն ել մազազին.  
Թանիսեն քիչ-քիչ մինձանում եր, անց եր կենում հազարից.  
Եժում հասավ տաս հազարի, առանց վուշինչ պակասի:

Հիմի ինքն ել մազազինում պրիկաշչիկնիր շատ ունե,  
Ինքն ել նըրանց են և անում, ինչոր իրան արեցին.  
Լավ ե, թե վուր Ալեքսանդրի պրիկաշչիկն ու աշկերտը  
Մակարիչի ջիզրը մե որ իրանից չհանեցին:



## ՏԱՆՏԻՐՈՉ ԳԱՆԳԱԾԸ

Տուն շինեցի, հենց իմացա,  
Յիս ել խալիսում մարթ իմ դառի,  
Հենց զիգեյի եստու եղնեն  
Քեփ կու քաշիմ աղավալի:


Վուտս վուտի վըրա զընիմ  
Ու փուղիրն ել իրանք գուքան,  
Ել ինչ կոնիմ զիլի, պատենտ,  
Առուտուր ու բազար-դուքան:

Եափ վունչիչ ել չիմ ուզում,  
Ինչ ել ուզիմ, հիմի դիփ կա,  
Ամա չնչվից իմ պրոգրամեն  
Ու դուս եկավ մինձ աշիփկա:

Տունս վունչիչ դախող չունե,  
Կենողներից խիստ իմ վախում,  
Արշինով ին տան քրին տալի,  
Հենց դիդենաք չիթ իմ ծախում:

Նըրանց տված ամսի քրինով  
Մե ակոշկի չին տա շուշեն,  
Ենքան ելա չե տուն դալի,  
Վուր շնորի տամ ծակած կրիշեն:

Կենողնիրը դիփ սովետակիք,  
Նուր լուս ննդած աղաղաղեք,  
Յա բանվոր ե, յա ծառայող,  
Մուքթա ուտող հարամզաղեք:



«Տունը, կոսէ, դուն չիս շնի,  
«Բանվորնիրն ին վըրեն բանի,  
«Նըրանք պիտի ապրին ենդի,  
«Տունը նըրանց կու պատկանի»:

Արի դուն ու խոսե հիմի,  
Մե ձեն հանե սըրանց կշտին.  
Մեկ ել տեսար ուշունց տվին  
Ու շանց տվին յեքա մուշտին:

Դուքնի քրինը՝ թումաննիրը  
Դիփ իրանք ին անուշ անում,  
Տան քրինը կի՝ կապեկնիրը  
Միդ համա ին դիմիշ անում:

Շատերից ել տունը խլեցին,  
Մե ոթախ ել չտվին իրան,  
Դես ու դեն ե ննդնում հիմի,  
Յանայանա խալխի դռան:

Ափսուս, ափսուս են ժամանակ,  
Ճիփ մարթն իրա մկրի տեր եր  
Ու սաղ տարվա ապրուստի փուղ  
Մենակ մուկքը պիտի բերեր:

Հիմի կի միզ՝ տանտերներիս  
Միր մկրերում դվորնիկ գրին,  
Վուր ամսեղլուս կենողներից  
Փուղ մոդ անինք ու տանք ջրին:

Թող տանտերը հիմի հիռվից  
Մտիկ անե ու ախ քաշե,  
Չոտկը գցե, թե իր տունը  
Ինչ ե նստի ու ինչ աժե



## ԶԱԽԱՐԻԶԻ ՌԶԱԽԱՅ

Զախարիչը առուտուրով  
Անհամբրելի փուղ եր գիղի,  
Մինձ անունով ու դովիաթով  
Անդաղա յեր սաղ թիփլիզի:

Առլոլակում տնիր ուներ  
Ետաժնիրով, ոսկե պատով,  
Ողուշաղով մեջը նստած՝  
Կինք եր քաշում փառք ու պատվով:

Նըրա կընիկ մաղամ Մաշոն  
Անչափ փուղ եր խարաբ անում,  
Գոլովինսկի սեյիր կոներ  
Հպարտ նստած շարաբանում:

Ու ախչիկը Զախարիչի՝  
Մաղմուազել սիրուն Մարգոն  
Որը յիրիք շուր եր փոխում,  
Դիփ մոդնի ու նուր-նուր ոանգով:

Միջնակ տղեն տանցի կլասում,  
Ախչկանց հիդ տանց եր անում,  
Մինձը մեղլուխ բուֆետներում,  
Պատիկը ջեր բան չեր անում:

Մե խոսկով միր Զախարիչի  
Բանը լավ եր բանի նման,  
Ողուշաղով, նոքարնիրով  
Կինք եր քաշում խանի նման:

Ոչով վունչիչ բան չեր շինում,  
Մենակ ուտում ուռչում եյին,  
Գիշերը քեփ, ցերեկը՝ քուն,  
Ուրիշ վուշիչ գուրձ չունեյին:

Դրուստ ին ասի, վուր իշխանն ել  
Փեշակ պիտի բռնե ձեռին,  
Չունքի մարթը կինքի սուփրում  
Մեղլուխ նստած չի մնա ծերին.

Զախարիչն ել ննդավ մե որ  
Ու դովլաթը մերաշ թռավ,  
Կարոտ մընաց ցամաք հացի  
Ու մոռացավ դաբլու վլավ:

Ինքը ինչոր ուչրեժդենում  
Եսոր նոքըի տիդ ե ճարի,  
Զոր ու ցամաք հացի համա  
Քաշ ե գալի վայնաչարի:

Մաղամ Մաշոն յաշիկ բռնած՝  
Պապիրոզ ե ծախում քուչում,  
Առաջվա պես շարաբանում  
Ել չե նստում ու չե ուռչում:

Մաղմուազել Մարգարիտան  
Երեխեքանց դաս ե տալի,  
Ափիցերին լայիդ չարից,  
Հիմի դուրդի կնիկ ե դառի:

Միջնակ տղեն երիվանսկում  
Առուտուր ե անում ոսկով,  
Մինձը նուր ե փեշակ սովում,  
Պատիկը կի գընաց Մոսկով:

Զախարիչի ոջախեմեն  
Ոչով պետք չե վուշինչ բանի,  
Կուլի մենակ պատիկի մեչ  
Զախարիչը չփոշմանի:





## ԽԱԶԵՅԻՆԻ ԱՎՈՒԹԻՆԸ

(Միուրը Դեմիան Բեղնիկից)

Մարտինիչի պրիկաշիկը Ալեքսոն  
Խաղեյինի ճուրտ եր դառի տաս  
տարի,  
Առուտնիրը հալա լուսը չբացված՝  
Չայ չխմած ջեր դուքան եր վազ  
տալի:

Թե վունց պիտի մուշտարեքանց թալաներ,  
Խաղեյինը մեղլուխ ետ եր դաս տալի,  
Ամառ-ձմեռ համ տկլուր եր, համ քախցած,  
Մե պինջակով, են ել առանց աստառի:

Ժամ-պատարաք խիստ եր սիրում Ալեքսոն,  
Հավատում եր եգեղեցուն, խեչերին,  
Վախենում եր աստուծեմն, դողում եր  
Ու խիստ խունար պատիվ կուտար մենձերին:

Երկուշափիթից ինչկը շափաթ գուքնումն եր,  
Կիրագի որ ժամ կու գընար անպաճառ.  
Մում եր վառում, աղոթք անում աստծուն,  
Վուր չմընար առանց գուրծի ու անճար:

Մե որ կնիկը հիվանդացավ մըսելուց,  
Գողինք մտավ ու դուս չեկավ մեշեմնն.  
Դոխտուրնիրը եղան գնացին, չոտկեցին,  
Գրբացն ասից, վուր հիվանդ և խեչեմնն:

Խաճ Ալեքսոն Մարտինիչի մող վազից,  
Լաց ըլելով արից նըրան աղաչանք.  
— «Խաղեյին ջան, կնիկս լամիս մեռնում ե,  
«Մինք ել խստակ տնով-տիղով մահացանք:

«Ճասը տարի զուլուղ արի քիզ հալար  
«Թե ծուռն ըլիմ, թող ինձ աստուծն անիծ ե.  
«Հիմի տաս որ ինձ դաստուր տու, խեչ գընամ,  
«Կուլի վուր զուրթ կնդաս ցավը նըրանից ե»:

Մարտինիչը խիստ չարացավ ու ասից.  
— «Այ մարթ, ինչ իս սարսաղ-սարսաղ դուս տալի,  
«Խեչն ինչ ե, վուր անմիղ տիղը փուղ միսիս  
«Ու դուքանը թողնիս առանց մուշտարի:

«Խեչը սուտ ե, խալխին անդաճ մի անի,  
«Նա գորութին չունե մարթուն ցավ տալու.  
«Դուն ուսումով, լուսավուրված մե մարթ իս,  
«Չիս ամանչում ետենց բանին հավտալու:

«Ամա թե վուր խստակ սրտով հավտում իս,  
«Ետ բանումն ել յիս քիզ կոնիմ լավութին,  
«Կիրագի որ ժամ կու գնամ քո խաթրու  
«Ու քիզ համա մում կու վառիմ, կաղոթիմ:





## ԿՈՒՊԵՇՆ ՈՒ «ՆԵՊ»-Ը

Ես ինչ լավ բան հնարեցին,  
Վուր առուտուրն ազատ թողին.  
Սիրտս իրա տիզը կանդնից,  
Մեռնիմ «ՆԵՊ»-ի հնարողին:



Հենց գիղեյի բանս բուրդ ե,  
Փուղ դադիլլ ել չիմ կանա,  
Լավ անունս խարաբ կուլի  
Ու հին ֆիբմես կու կուտրանա:

Փառք աստձուն, վուրդուշմանը  
Զծիծաղից վրես մե լավ,  
Ելի բանս աջող գընաց,  
Վիրչը նըրա սրտով չելավ:

Դրուստ ե, մե քիչ նալոգնիրը,  
Պիտի ասիմ, հուփ ին տալի,  
Ամա ապրանք թանգացնելով  
Մինք ել տակից դուս ինք դալի:

Մեմե գամ ել ահ ինք ուտում,  
Ել չին տալի մե քիչ դաթար.  
Մեկ ել տեսար տարան ԶեկԱ.  
Ու արեցին լիդապատար:

Ամա փուղն ու աշխատանքը  
Ենենց համով, ենենց քախցը ե,  
Վուր ինչքան ել դարդ ունենաս,  
Մե նմուտում դիվ կու փախցնե:

Ինչ իմ հոգում, ինչ իմ հարցնում՝  
Իշխանութին, վլաստը ումն ե.  
Յիս են գիղիմ ու լավ գիղիմ,  
Վուր ոսկիքը իմ ջիբումն ե:

## ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ՄԱՐՈՒՍԸ

Տեր Միքելը սաղ մինձ պասին ժամումը  
Զեր հիուցնում աչքը սիրուն Մարուսից.  
Խիսճ տերտերի բերնի ջուրը գընում եր,  
Խիստ սուրազով սիրու ինչ որ բան ուզից:

Եղեղեցում ավետարան կարթալիս  
Ու կիրագի իրինիրը քարուզին  
Տեր Միքելը նրան եր տնդղում աչքերով,  
Ել չեր կանա մտեն զցի Մարուսին:

Երկու տարվա թագա հարս եր Մարուսը,  
իրա մարթուն հոքով-սրառվ սիրում եր,  
Չունքի մարթն ել համ ջենել եր, համ դոչաղ  
Ու կնդա պես նա ել կարքին սիրուն եր:

Տեր Միքելը ել շատ երգար չտանջվից,  
Ճամփեն զժավ սրտի կրակը հանգցնելու.  
Բախտը բերից, Մարուսն եկավ իր վուտով  
Ու տերտերը խոսից առանց թաքցնելու:




Ծաղկազարթին ճաշակվում եր Մարուսը,  
Տերտերի մոտ եկավ խոստովանելու.  
Չոքից առչիվ ու միխկիրը դիմ ասից  
Իր ճաշակը ընթունելի անելու:

Տեր Միքելի սիրտը խփից չարխի պես  
Ու փափաց անգաճումը Մարուսին.  
«Միրուն ախչիկ, իմ խնթիրքս կատարե,  
«Վուչ միխկ կոնիս, վուչ կու վասիս նամուսին:

«Յիս քու սերից երգում իմ ու խորվում իմ,  
«Ի՞նչ կուլի, վուր դուն ինձ մե ջեր ընթունիս.  
«Ոչով վուչինչ չի իմանա, հոքի ջան,  
«Երեւում ե, դուն շատ բարի սիրտ ունիս:

«Դուն աշխարքում ուրիշ վուչինչ միխկ չունիս,  
«Քու միխկն են ե, վուր ինձ սիրով դիղում իս,  
«Ետ մե միխկն ել վուր քավիս ու խտակվիս,  
«Են կինքումը դրախտի մեշը տիղ ունիս:



Գեղին մտավ խիսճ Մարուսը ամութից,  
Վիկացավ ու գժի նման վազ տվից,  
Ել չըգնաց ճաշակվելու ժամումը,  
Տեր Միքելը նըրան շատ լավ դաս տվից:

Տասը տարի անց ե կացի են որից.  
Հրաժարվիլ ե միր Մարուսը ճաշակից,  
Զե թե ինքը, վուրթկերանցն ել չե դրզում,  
Վուր չխափին հենց երեխա հասակից:





## ՍՈՎԵՏԻԶԱՑԻԱ

(Նվեր Գ. Փ. ին)

Դրուստ վուր խոսիմ, պիտի ասիմ,  
Առանց ագիտացիա,  
Վուր, հախ ասծու, փիս բան չելավ  
Ես սովետիզացիան:

Ազգն ու հավատ ել մոդա չե,  
Ել վնարդի ե նացիա,  
Հիմի ոչով ել չե ասում  
Ծա թուրք ե, նա վրացի ա:

Թե՞ ասում եյին բալշեկազմը  
Հարուստներին քացի ա,  
Դիմ հնարած սուտ ե ելի,  
Իստակ պրովակացիա:

Ելի դուքան, ելի բազար,  
Ելի բանկ ու ակցիա.  
Ինչքան գուղիս առ ու ծախե,  
Են ել առանց տակցիա:

Դրուստ ե, ոսկի փուղիր չունինք,  
Վուր կա սպեկուլյացիա,  
Ամա լիքն ե մեշոկներով  
Թխտե ասիդնացիա:

Թող նստին ու սովետ սարքին  
Անզիան ու Փրանցիան  
Ու նըրանց մոդ դոնադ գնացած  
Ռուսաց եմիգրացիան:

Անվիրչ մինի պերեգավոր,  
Ռազմի դերեգացիա,  
Խան Զենովա ու Խան Լոզան,  
Մեգուխ կոնֆերանցիա:

Եսոր Պարիժ, եքուց Լոնդոն,  
Վունցոր Մցիւթի ստանցիա,  
Խոսում ին ու խոստանում ին  
Խալիսին ուժորմացիա:

Թաքուն ուրիշ բան ին սարքում,  
Ինչոր մախինացիա,  
Կովի թագարիք ին տեսնում,  
Նուր մոքիլիզացիա:

Իմ փեշակն ել խոմ լավ գիղիք,  
Պոլուկըուգ ու շպացիա,  
Խանդիսխան ել մուխամբազով  
Սարքիմ իլլյուստրացիա:



## ԵՓՐԵՄՎԵՐԴԻ

(Նվեր Գ. Փ. ին)

Եփրեմվերդին վուր գըրում ե,  
Թե աշխարքի վիրչն ե հասի,  
Յիս չեյի հավտում, հենց գիղեյի  
Տուտուց մարթն ե ետունք ասի:

Ամա հիմի վուր տեսնում իմ  
Թամաշեքը ես միր քախկի,  
Ուշքս, միտքս խառնվումե,  
Քիչ ե մընում սիրտս տրաքվի:

Ոխտանասուն տարվա մարթ իմ  
Ու իմ որում ջեր չիմ տեսի,  
Վուր ախչիկը վուրթի բերե  
Առանց հարսնիք, առանց փեսի:

Վուր կնգդիրքը՝ տունը թողած,  
Ու շատիրն ել ուռած փուրով,  
Դեղերատիրկի բաղարումը  
Բանդ ըլեյին առուտուրով։


Վուր երեգվա պամեշչիկը  
Եսոր իր տան վեշչիք ծախեր,  
Դեներալը դվորնիկ դառնար,  
Ավիցերը՝ պարիկմախեր։

Վուր կուպեծը իր ապրանքը  
Ծախելու տիղ պահեր, թաքցներ  
Ու գուքանը քրինի խաթիր  
Հիդն ու հիդը պատիկացներ։

Վուր տանտերը իր տների  
Դվորնիկ դառնար անջամադիր,  
Սովորագարը դալալ դառնար  
Պուբլիցիստը դարդակ գրադիր։

Վուր հայ լիզզի անաբանեն  
Դառնար եսենց ալթա-բալթա.  
Յ-ին Յ-ի տիղ, Յ-ն Է-ի տիղ,  
Ո-ն Օ-ի տիղ պիտինք կարթա։

Բաս վմնց չավտամ եփրեմվերդուն,  
Գըրածնիրը սուտ ե գանա,  
Վուր աշխարքը շուռ ե եկի  
Ու կանգնիլ ե դիրամալա։



## ԲՈՒՐԺՈԽԵՆ ՈՒ ԱՏՏՈԽՁ

Սարքիս աղեն եգեղեցում ծունկ չոքած՝  
Աղոթում եր իր աստձուն սրտալի.  
Գանդատվում եր առուտուրից ու լալիս,  
Վուր դուքանը ենքան ոգուտ չեր տալի։




«Աստուծ, աստուծ, ասում եր նա խղճալի,  
«Դուն խնդիրքս կատարիլ իս մշտական,  
«Լավութինդ վջարիլ իմ յիս ել խոմ,  
«Մում իմ վասի, մատաղ արի շատ անգամ։

«Հիմի քի մողելի ունիմ մե խնդիրք,  
«Ումիկ ունիմ, վուր ես բանն ել կատարիս,  
«Դուն խոմ խնձ պես արթար մարթուն սիրում իս,  
«Զունքի դուն ել դիփունանցից արթար իս։

«Աղաշանք ու պաղատանք իմ քիզ անում,  
«Պատերազմը մե քիչ ելի երգարի,  
«Բանս դրստիմ ու զատկին ել քիզ համա  
«Գանձանակը մե թուման իմ վեր գալի»:

Հենց ետ վուխտը Սարքիս աղի հեղիվը  
Աղոթում եր մե գյուտած խիլսն մշակ.  
Մե ջուխտ մում եր նա աստծուն խոստանում,  
Վուր գուրձ գմնի ու բանեցնի իր փեշակ:



Սարքիս աղեն վուր իմացավ ես բանը,  
Շուռ եկավ ու ասից նըրան չարացած.  
«Ենև շանվուրթի, ինչ իս եկի խցկի  
«Ու նիղացնում իմ աստծուն ողորմած:

«Հաց իս ուզում, ահա ես քիզ մե շահի,  
«Վիկալ փուղն ու թող աստծուն իր տիղում.  
«Յիս նըրա մոդ հազարների գուրձ ունիմ,  
«Դուն կի գոռշի հաշիմսիր իս մեջ բերում»:



### ՊՐԻԿԱՇՉԻԿՆ ՈՒ ԽԱԶԵՑԻՆԸ

Եսոր Մակար յակուֆիչը  
Ենենց ջգրած եկավ գուքնից,  
Վուր մե թիքա հաց չկերավ  
Ու սաղ գիշեր իսկի չքնից:

Կնիկը մարթուն մտիկ տվից  
Ու ցած ձենով հարցըից նըրան.  
— «Հիվանդ խոմ չիս, իմ աչքի լուս,  
«Ռանդ չե մնացի ել քու վըրա»:

— «Ե՞հ, նատո ջան, ել մի՛ հարցնի,  
«Աստուծ սիրիս ձեռը վիկար,  
«Սրտումս վուր դանակ խցին,  
«Ել մե կաթիլ արուն չի գա:

«Շունշանվուրթի պրիկաշիկ»  
«Խազեյին ե զիսիս դառի  
«Ու աշկիրտս են լածիրակ  
«Արշին ու կես լիզու հանի:

«Կոմպարտիի չլեն ին գրվի  
«Ալեքսանդրեն ու Գիգոլին.  
«Մինձն ասում ե՝ կոմմունիստ իմ,  
«Պատիկը թե՛ կոմսոմոլ իմ:

«Ել գիրք ասիս, կազեթ, ժուրնալ,  
«Ի՞նչ ին կարթում—Ձեկա, Տեկա,  
«Ու դառիլ ե մաղաղիես  
«Թամամ վունցոր բիբլիոտեկա:

«Վախտ ու բեվախտ մեկ ել տեսար,  
«Առուտուրի լավ ժամանակ,  
«Գնում ին ինչոր սարրանիա  
«Ու ինձ դուքնում թողնում մենակ:

«—Մինք ել պիտի լսինք, կոսե,  
«Թե ինչ ըեշ ին ենդի կարթում,  
«Հիմի, կոսե, զիր ու ուսում  
«Հարկավուր ե ամեն մարթուն:

«Դիփ առուտուր պիտի չանինք  
«Կշեռչ, արշին, չոտկ ու դավթար.  
«Ղուլուղիքն ել ուսում գուզին—  
«Խիքը սուրը, լիզուն ճարտար:

«Մինք ել, պիտի տեսնինք, կոսե,  
«Գրքի սիվ ու սիպտակ երես,  
«Վուր լավ ճանչնանք միր դուշմանին  
«Ու պաշտպանինք միր ինտերես:


«Հիմի կոսե, մարթն ազատ ե,  
«Ամենքն իրանց զվիտ տեր ին,  
«Ել չինք դառնա ճուրտը դուքնի

«Ու չինք հավտա ել տերտերին»:  
Աշկերտն ելի ջեր պստիկ ե,  
Թող մտիկ տա թուխտ ու գրքին.  
Դուռն են ախմախ մինձին ասա,  
Վուր ննդիլ ե նըրա խիլքին:



## ՍԱՐԳԻՍ ԱՂԱՅԻ

### ԿՏԱԿԸ




Դից շաբաթ ե Սարգիս աղեն  
Հիվանդացավ, գողինք մտավ,  
Շատ գոխտուրնիր եկան-գնացին,  
Ամա ոչով գիդ չգթավ:

— «Այ կնիկ,— ասավ Սարգիս աղան,—  
«Անմիդ տիղը փուղ մի խարջե.  
«Տեսնում իմ, վուր մեռնիմ պիտի,  
«Դուռն ինձ համա տերտեր կանչե»...

Տերտերն եկավ ուրախ-ուրախ,  
Վողջույն ավից ջեր հենց դռնից,  
Կնդան թաքուն աշքով արից  
Ու հիվանդի ձեռը բոնից:

«Հայ, տերտեր ջան,— ասից աղեն,—  
 «Միխկիրս կու շատանային,  
 «Փուղ մող արի, ամա հոքիս  
 «Գլրավ դրի սատանային:  
 «Տերն ողորմի թաքավուրին  
 «Ու վայսոբա հարողին,  
 «Են կազիննի փողըաթնիրը  
 «Ինձ համա մինձ դովլաթ թողին:  
 «Ամա վիրչը չմարսեցի,  
 «Սալգաթնիրը խիքի եկան,  
 «Բուլյուցիա մոդա բերին  
 «Ու շանց տվին ինձ ել ԶեկԱն:  
 «Են որվանից ելդա դիբավ,  
 «Գողինք ննդա այ ես հալին.  
 «Հիմի գիղիմ պիտի մեռնիմ,  
 «Պրաշայ ասիմ ես աշխարին:  
 «Ու կու խնթրիմ քիզ, տերտեր ջան,  
 «Վուր ինձ համա աղոթք անիս  
 «Ու իմ թողած դովլաթեմեն  
 «Հալալ կեսը դուն կու տանիս:



### ՏԵՐՏԵՐԻ ԳԱՆԳԱԾԸ

Խարաբ ելավ միր աշխարքը,  
 ել չին ճանչնում մինձ ու պստիկ,  
 Եղեղեցուց, գանձանակից  
 Հիմի պիտի դարդակ նստինք:  
 «Քրիստուս, աստուծ, խաչ ավետրան  
 «Ու տերտերը սուտ ե, կոսե.  
 «Նըրա խոսկին չհավատաք,  
 «Դիփ սուտ բանիր կու քարոզե»:

Վայ միր որին ու միր հալին,  
 Ես ինչթավուր վուխտի հասանք,  
 Վուր դիփ միզ ին ուշունց տալի,  
 Բիաբրութին ու բամբասանք:

«Եղեղեցիք դիփ կոխպեցեք,  
 «Խաչը, կոսե, հիուր տարեք,  
 «Փարաջեքը դեն ածեցեք  
 «Ու միզ նման մարթիք դառեք:

«Ժամ-պատարաք չի հարկավուր,  
 «Բան շինեցեք, ով ինչ կանաք,  
 «Հերիք ինչոր խալիք փուղով  
 «Լքցրիք, կոսե, ձիր գանձանակ»:

Երնեկ եսենց խոսողնիբը  
 Մարթիք ըլին մեքիչ խիքով,  
 Տուն-տիղ սարքած, ողլուշաղով,  
 Տարիքն առած բիի-միրուքով:

Ամա ցավը նըրանումն ե,  
 Նա ե մարթուս սիրտը երում,  
 Վուր երեղվա լածիրակն ե  
 Միր զիներին ես ոյին բերում:

Ել ինչ պիտի անինք հիմի,  
 Եստու եղնեն վայ միր որին,  
 Վուր մինք պիտի անդամ անինք  
 Նուր դուս պրծած կոմսոմոլին:

Ել վունց պիտի ապրուստ ճարինք,  
 Տունը քանդիկի ինչոր ԶԱԳԱՒ-ի,  
 Վուր տերտերի առուտուրը  
 Հիդն ու հիդը պիտի պակսի:

Ասինք, շատ լավ, կոխպոտեցինք,  
 Եղեղեցին ոքուտ չի տա.  
 Բաս տերտերին հասանելիք  
 Լիկիդացիան ով պիտի տա:



**ՏԵՐՏԵՐԸ ԺԱՄՈՒՄ ՈՒ  
ՌԵՍՈՐԱՆՈՒՄ**

I.

Տերտերը ժամում քարող եր կարթում  
Անառակության ու գինու մասին.  
Խորուրդ եր տալիս կնդան թե մարթուն,  
Վուր ետ բաներին հրաժարիմք ասին:

«Հարփիլը, կոսե, վնասակար բան ե,  
«Ոչով գինեմեն ոքութ չի քաղի,  
«Լոթին իր գլխին դուշմութիս կանե  
«Ու կանրախտացնե իր ողլուշաղին:

«Անառակ կինը փորձանք ե բերում  
«Թե արդամարթու, թե իրա համա,  
«Ետ ե պատճառը, վուր ոջախներում  
«Կըսիվ ե սարքվում, արուն ու զրամա:

«Պիտի աշխատիք թե մարթ, թե կընիկ  
«Ես երկու բանից միշտ հիռու փախչիք,  
«Վուչ լոթութենի հեղեկից ննդնիք,  
«Վուչ սիրիք յադի կընիկ ու ախչիկ:»

Տերտերի բերնով քրիստունց եր խոսում,  
Շատերի աչքից արտասուք քամից.  
Եսենց եր խալխը տերտերին լսում,  
Վուր ել չեյին ուղում հիռանա ժամից:


II.

Թիվլիզի մե խուլ փողոցի ծերին  
Մե ռեստորան եր բաց արի ովոր,  
Տուն եյին կանչում մուշտարիներին՝  
Դիփ տանավարի, ճանանչ ու սովոր:

Իստակ սուփրեքով ստոլնիրը շարած,  
Իրա սկամիքով մեկ ու կես գումին,  
Ակոշկի վրա վարաղով գըրած՝  
«Օтпускается обед и ужин»:

Հեղիվը սիրուն կարինետ սարքած  
Արոնեմենտնի մուշտրեքանց համա,  
Ուր ինչըու լուսը նստած ու պառկած  
Քեփ եյին անում կավալեր-դամա:

Ես գիշիր ենդի քեփ անողներից  
Մեկը կնիկարմատ, մեկելը մարթ եր.  
Չիմ գիդի կնիկը ով եր, զուր տեղից,  
Մարթը կի նա յեր, միր ճանանչ տերտեր:



Տերտերը իր սիվ փարաջեն հանած,  
Բայց արած դոշով նստիլ եր կրեսլում,  
Ու կնիկարմատին իր գոքումն առած՝  
Պոշտի յեր անում ու լազաթ տեսնում:  
  
Ու կնիկարմատը, հանաքով միթամ,  
Ասում եր նըրան՝ դարտկելով ստաքան.  
«Տերտեր ջան, յիս քիզ մե հարցմունք կուտամ,  
«Զուղար տու փունցոր հոքեուրական:

«Տերտերի համա ամութ չե՞ գանա,  
«Վուր ուրիշների կնդերանց պաշե,  
«Ի՞նչ կոսե խալիսը թե վուր իմանա,  
«Սա աստծու մող միթե միխել բան չե:

«Հարդիկելու մասին ել յիս ինչ ասիմ,  
«Դուն ել լավ գիդիս, ինչ ասիլ գուզե.  
«Չին ասի՞—տեսեք ես աննամուսին,  
«Հոքեուրական ու լոթի բուզ ե»:

Տերտերը կնգան ջուղաբ ե տալի.  
«Յանդիշ իս խոսում, իս սիրուն դուշկա.  
«Աշխարքում մարթը քեփի պիտի անի,  
«Քանի վուր սաղ ե ու ջանում ուժ կա:

«Միխել են վախտն ին միխելի տիղ դնում,  
«Յիփ աշկարա ին կատարում դրսում,  
«Ամա ես սիրուն ու թաքուն ընում  
«Ո՞վ ե միզ տեսնում ու ով ե լսում»:

Ու առուտեհան, ջեր ելի ձեքին  
Տերտերը գնաց իր տանը պառկից,  
Դուշկեն ել գնաց փուղիրը ձեռքին,  
Դիփ գանձանակով մոդարած խալխից:





## ԱՆԱԼՈՅԻ ԵՐԱԶԸ

(Նվիր Գ. Փ. ին)

Անցած գիշիր երաղում  
Զարմանալի բան տեսա,  
Հենց իմացա թիվլիզում  
Մինձ խաբար ե, հանդես ա:



Միթամ ես միր քախկումը  
Ելի հին եյին կարեիրը.  
Ելի նոքար ու աղա,  
Բուրժուա ու բանկիրը:

Միթամ ելի ունեյինք  
Պոլիցա ու պրիստավը,  
Ելի հին-հին զակոննիր  
Ու տարգովի ուստավը:

Միթամ Պետրեբուխումը  
Գթիլ ին մե հոքավուր,  
Թախտի վըրեն նստեցրի  
Ու շինիլ ին թաքավուր:

Միթամ մինք ել քաղաքը  
Զուքիլ եյինք ֆլազներով,  
Խալիս եր գնում թամաշի,  
Թաղա շուրիր հաքնելով:

Միթամ պոլիցմեստաբը  
Ման եր գալի գըոշկովը,  
Ու զվարեցի բալկոնից  
Գլուխ եր տալի Դաշկովը:

Միթամ մաղազիեքը  
Կես զիշիրին բաց եյին,  
Մուշտարիքը միր գախում  
Ոսկի-երծաթ կածեյին:


Միթամ ոսկի փուղիրով  
Լիքս եյին միր ջիրերը,  
Թղթե ասիզնացիան  
Վունցոր ախալ ու զիրիլը:

Միթամ չկար սայուզը,  
Բիրժա բեզրաբուների.  
Ընթունում եյինք, դուս անում  
Առանց եպիզոդների:

Միթամ նոքար-զուլուզիք  
Լաց եյին ըլում, սուք անում,  
Վուր ելի հիդ ընթունինք,  
Ելի տիղ տանք դուքանում:

Միթամ սոցիալիստնիրը  
Դիմ միանա վախիլ ին,  
Մե քանիսին բռնիլ ին,  
Երիվանսկում կախիլ ին:

Միթամ... ամա ինչ միթամ,  
Մերաշ աչքս բաց արի,  
Կնգաս տեսա, վուր կանգնած  
Բոթում եր ու ձեն տալի:



— Այ մարթ, վիկաց ջալդ, կոսե,  
«Հաքի չուստն ու խալաթը,  
«Եսոր զորքի պրաղնիկ ե,  
«Գընանք տեսնինք պարադ»:

Երնեկ իսկի ձեն չտար  
Ու ինձ զարթուն չեր տեսի,  
Ամա ով ե կնգամեն  
Ես աշխարքում խեր տեսի:



## ՄԻՐ ԴԱՇԵՖԸ

Տաս տարի ե վուր դաշեքում չիմ ելի,  
Կարոտիլ իմ Մանգլիսին ու Կոջորին.  
Ամառնիրը քախկի շուքից երվելով,  
Երնեկ կուտամ Տախախմելի հով ջրին:

Անցած որը ճամփա ննգա իմ ջոխով  
Ու կարձ ճամփով տարախմելին վուր հասա,  
Սառը ջրով ջեր բողազս թաց արի,  
Իժում գիղը դիմ ման եկա ու տեսա:

Տեսա... ամա ումը տեսա դաշեքում,  
Զկարծեք, թե վաճառական, դուլուզի.  
Նըրանց նոքար ու երեգվա գյաղեքին՝  
Դուրգալ, սլեսար, սապոնիկ ու թուլուխչի:

Ել վուրդի ե կազարովի մինձ դաշեն  
Ու վարանցով-Դաշկովի պես դաշնիկը,  
Տարախմելին պայծառացնող, շուք տվող  
Ու գիշիրով նըրա սիրուն նաշնիկը:

Տաքախմելից Կոջորը խո մողիկ ե,  
Ինտերեսով գնացի են ել տեսնելու.  
Ենդի ուփրու մումով պիտի պարտիք  
Չախարիչի, Մակարիչի պեսներուն:

Սաղ կոջորը երեխեքով լքցրիլ ին,  
Են ել ումը... Ալեքոյի, Գրիշինը,  
Ետ լոթիքն ել ենքան ունին երեխա,  
Կոսիք տանը ել բան չունին գիշիրը:

Մեկենիրը դիմ սովետակի դուլուղչիք,  
Զաստնի մարթկանց ել չիք տեսնի կոջորում.  
Սոլուակի բուրժուեքը կուտրացած,  
Քախկի շուքից երգում ին ու տոչորվում:

Ավտոմոբիլ դիլիժանս ու տրոյկա  
Բլումա խամփին բերում ին ու տանում ին,  
Ամա նրանց մեջ ել չիք տեսնի դուք նստած  
Աղային ու նըրա/ուռած խանումին:

Ասում ին, թե Մանգլիսն ելլ ենենց ե,  
Չեր եսոր ել բուրժուեքի բուն ե նա.  
Յիս չգնացի, ամա դրան ել չիմ ավտում,  
Երգար որը նա ել պիտի չունենա:



### ԱՇԽԱՐՔԻ ԲԱՆ


Մոդ ինք ելի մե քանի մարթ  
Ու միզ համա սովետ սարքի,  
Փիքը ինք անում, թե վունց պիտի  
Դրստվի բանը ես աշխարքի:

Ինչկի վուր որ պիտի մընանք  
Եսենց անդեր, առանց կառքի,  
Մուքթա ուտող չինովսիկը  
Համ չտեմնե միը կաշառքի:

Խերը գընաց առուտուրի,  
Ժամանակիս ծախ ու արքի,  
Յիփոր եսքան քրին ու նալոգ  
Միր զգերին պիտին շալիի:

Քանի՞-քանի՞ մարթ կուտրացավ,  
Մընաց առանց փուղ ու փառքի  
Ու կնդիբրքն ել կարոտ մնացին  
Պիկնիկների ու մեծարքի:

Վուր փուղիրը միսում եյին  
Առանց հաշվի ու համբարքի,  
Խալին ել միթամ չեր իմանում  
Մեկեանիրը նըրանց վարքի:



### ԲՈԼԾԵՎԻԶՄԸ ԹԻՓԼԻԶՈՒՄ

Զարբազնեքի ձեն եր գալիս կոջորից,  
Տուաքվում եյին դումբարեքը զալպերով.  
Փուլ եր գալի մենշևիզմի ոջախը,  
Շատ-շատերին զագրանիցա ճամփելով:

Մե շափաթում ունգը փոխվիդ քաղաքի,  
Առուտուրը խանգարվեցավ, կանգ առից.  
Բոլշևիզմի մոտկանալը թիփլիզին  
Բուրժուեքի հանգիստ քունը խանգա-  
րից:

Կուպեծների գավթարնիրը խառնըվից,  
Հպարտացած Սոլուակը կուչ եկավ,  
Թերերվալի քսանուչուբսի զիշիրը  
Սոլուակի խալիսի աչքին քուն չեկավ.

Ինչոր երծաթ ու ոսկեղեն ունեյին  
Պատերի մեջ ու գեղնի տակ թաղեցին.  
Շատը դուքնից իր ապրանքը տուն բերից,  
Շատ խիստ եյին բոլեկիզմից վախեցի:

Մարտինիչը, Զախարիչն ու Աղալոն  
Նստոտիլ ին քինթ ու պոռւնգը կախ գցած,  
Մեկսմեկու սիրտ ին տալի խոսկիրուվ,  
Սրտումը կի ամեն մեկի ահ գցած:

Մարտինիչը դիմունանցից դոչաղ ե,  
Շանց ե տալի ջիբում դրած դարանչեն.  
«Մի վախենաք, դոչաղ կացեք, ախպրաիք,  
«Ետենց մերաշ վախենալը լավ բան չե»:

Կեսպիշերին մեկ ել խարար բերեցին,  
Թե քաղաքում ոռւս սալդաթ ե առւն դալի.  
Մարտինիչը՝ ոանգը կորցրած ահեմեն՝  
Զե իմանում թե դամբաչեն ուր տանի:

Թախ ե կացնում ոճորքումը ու ասում.  
«Նահլաթ չարին, եպով բան չինք դրստելու.  
«Վայ թե եքուց որիսկ անին աներում  
«Ու ինձ տանին իշի բաղնիս նստելու»:

Են գիշիրը վունցոր ելավ լուսացրին,  
Առուտեհան դրւս գընացին թամաշա.  
Ել ով ասիս չեր դրւս եկի փողոցում,  
Տղա, ախչիկ, պապաշա ու մամաշա:

Երիվանսկի պլոշչադումը միտինդ ե,  
Ունչ ին խոսում, բանվորների գովք անում.  
Բուրժուեքը չին իմանում ինչ անին,  
Կուչ ին եկի իրանց դարդակ դուքանում:

Մարտինիչը, Զախարիչն ու աղալոն  
Նստոտիլ ին ու քնթնիրը վեր թողի,  
Հերն ու մերն ին ուշունց տալի, անիծում  
Եկած ճամփեն իրանց քաշին բերթողի:



## ԴԻՓՈՒՆԱՆՑ ՍԵԿՐԵՏԸ

1.

Այ, ես մարթուն խո կու ճանչնաք,  
Վուր անհեսաք փուղ ե դիզի,  
Լավ մարթու ել անուն ունի,  
Աչք ե գառի սաղ թիվլիզի:  
Սրա սեկրետը վուր իմանաք,  
Վըրեն թքիլ չիք ել ուզի,  
Համ շատ մարթու տուն ե քանդի,  
Համ ննզիր ե գուղ ու բուզի:  
Պստիկ վուխտը ջեր աշկիրտ եր  
Ու կանզնած եր դուքնի դռան,  
Խազեյինը կուտր ննզավ,  
Մաղազիեն մընաց սրրան:

2.

Ես խազեյինին կու ճանչնեյիք,  
Վուր մինձ քարինի տեր եր դառի.  
Բանողներին խիստ եր ատում  
Ու դուշման եր պրոլետարի:  
Առաչ ինքն ել ուրիշի մոդ  
Մե բանվոր եր ամսով բանող,  
Ու գիշիրնիր քարինից թաքուն  
Յարաղնիրը իր տուն տանող:  
Ենքան տարավ, ենքան կրից,  
Վուր քարխանեն խստակ դարտկից,  
Ինքը մերաշ խազեյին դառավ,  
Քարինի տերը մեռավ պարտքից:

## III.

Են մեկելին խո լավ զիդիք,  
 Վուր չաղ ու լավ տիղ եր ճարի,  
 Ուսում չուներ, ամա շինը  
 Ավելնում եր տարեց տարի:  
 Սրա սեկբետն ել բախտի մեջն եր,  
 Զոռ չեր տալի իրա խիթին.  
 Մե կնիկ ուներ ենքան սիրուն,  
 Վուր դուր եկավ նաշայնիլին:  
 Չամագիրը վիկալնելիս  
 Չեռած կնգա մոդ կու տաներ.  
 (Իմ կարծիքով լավ եր անում,  
 Փուղը նըրան կու պատկաներ):

## IV.

Ես դոխտուրին դուք ի՞նչ կասիք,  
 Վուր դառիլ եր փուղի գերի.  
 Գիդիք սա իր աշխատանքով  
 Քանի մարթու զլուս ե կերի:  
 Զըհել վուխտը չաղ հիվանդի  
 Կնգա վըրեն աճկ եր տնկում  
 Ու չեր իսկի մտիկ տալի,  
 Թէ հիվանդը վունց եր տնքում:  
 Թէ տեսնում եր ել չեր վառվում  
 Իր հիվանդի կինքի լամփեն,  
 Միր դոխտուրը ենթի կինքի  
 Շանց եր տալի ձեռած ճամփեն:

## V.

Են լածիրակ առվոկատը  
 Վունց եր խալսի կաշն պլոկում,  
 Դոխտուրեմեն ուփրո բեթար,  
 Ախկատ-հարուստ ել չեր ջոգում:

Փուղի համա իրա հոքին  
 Սատանին եր ծախի իստակ,  
 Անմիղ մարթուն բիրթն եր դրգում,  
 Միդավուրին շինում հրիշտակ:  
 Շատ պաղլոգնիր սարքից թաքուն,  
 Շատի մուգը տորգով ծախից,  
 Դիփ ել մարսից անիծածը,  
 Ոչով չեկավ նըրա հախից:

## VI.

Են տերտերը, վուր խոսելիս  
 Քրիստուսին եր մեզլուխ հիշում,  
 Գիդիք, վուր կնգանից թաքուն  
 Միրեկան եր պահում կրիշում:  
 Եղեղեցում ժամ ասելիս,  
 Քարոզ տալիս հենց մինձ պասին,  
 Աչքի տակով թաքուն-թաքուն  
 Մտիկ կոներ կանանց դասին:  
 Թէ իրա մոդ խուստովանվող  
 Կնիկարմատը լամի եր ըլում,  
 Զեր աղըեան եր հարցնում նըրա,  
 Իժում թաքուն մողը գնում:

## VII.

Են բանկիրին խոմ լավ տեսաք,  
 Են հաստափուր բյուրոկրատին,  
 Վուր մինձ շահ եր տալիս փուղին  
 Ու ետ բանով խափից շատին:  
 Զեր մոդ առավ խալսի փուղիր,  
 Իրա համա շինից թանիսա,  
 Իժում մերաշ կուտը ննգավ,  
 Կոխպից բանկն ու գընաց փախավ:

Հիմի մարթը զազրանիցում  
Անուն ունե ֆաբրիկանտի,  
Ու ով գիղե, թէ նա եստի  
Հազար մարթու տուն ե քանդի:

VIII.

Մեկ ել են հաստ մաղամ ձալոն,  
Վուր միթամ թէ բարեգուրձ եր.  
Կարծեմ դուք ել կու գիղենաք,  
Թէ բանիրը նըրա վունց եր:  
Ժամեմեն վուր դուս եր գալի,  
Ախքատներին փուղ եր բաժնում,  
Իր տանը կի քոծ ու բջին  
Ամսե զլիխն փուղ չեր համում:  
Յիրիք մարթու զլուխ եր կերի,  
Վըրա չուրսին ճանդիլ գուզեր.  
Խալխի աչքում խիստ նամուսով  
Ամա թաքուն աննամուս եր:

ԳԵՐՉԱՌԱՆ

Այ վունց եյին հին ժամանակ  
Խալխի աչքին լավ երկում  
Ու սեկրետը ինչըու բացվեր  
Նստած եյին դիփ վերեռում:



ՀԵՅ ԳԻՐԻ ՍՈԼՈԼԱԿ

Անց իմ կենում Սոլոլակի քուչեքով  
Ու աչքիրս թաց ին ըլում դարդեմեն,  
Ի՞նչ իմ տեսի մե ժամանակ յիս ենդի,  
Ու եսոր կի վանց ե փոխի կարտինեն:  
Զեր չիմ ուզում, վուր աչքերուս հավատամ,  
Հենց զիդում իմ երազումն իմ ման գալի,  
(Աստուծ անե, վուր զրուստ քընած ըլեյի  
Ու մե ոմքին զա իմ քունը խանգարի):

Ել վաւրդի ե Սոլոլակի աների  
Քեվն ու զողը աղտ մարթկանց պատվական.  
Մարքրիտներով նըրանց զուքված դամեքը  
Ու սեփական կալասկա ու շարաբան:

Յակուլիչնիր, Զախարիչնիր կորիլ ին,  
Իդի ու թոզն ել չի երկում վուշ մեկի.  
Սոլոլակն ել կոսիք, ել են թաղը չե,  
Դիփ փոխիլ ին անուննիրը քուչեքի:

Յեակուլիչ ու Զախարիչի փոխարեն  
Գիզոնիր ու Միխակնիր ին մոդ ելի,  
Ամեն մեկը իրա համա ճարիլ ե  
Լավ ոթախնիր զորութենով որդերի:  
Դվարեցների հանդի շինած տներում  
Նոքարնիր ին ալզուվուրվի լազաթին,  
Տերիրը կի կունճուրներում կուչ եկած  
Որինավուր ոթախների հասրաթ ին:

Կուխնա, պլիտա, բաղնիս, վահնա ու դուշի,  
Քեփի ին անում աղավարի լոթիքը.  
Հիդն ել մերն ին ուշունց տալի շինողի,  
Վուր չե շինի իրանց քարինի մողիկը:

Երեզվա որ պագվալներսւմ վեր ածած,  
Մութ ու նամից ունդ չունեյին երեսին,  
Եսոր ոսկե պատերի մեջ լուսավոր,  
Ելեքտրոնով, առանց լամփ ու կերոսին:

Մե մարթ հարցնի՝ մում մուլքումն իք նստուի,  
Ո՞վ ե շինի ետ վարազով պատիրը,  
Ո՞վ ե ետի ոսկի ածի մեշոկով,  
Գանա հիշտ եր եղբան փուղի դադիլը:

Ամա նըրանք եստունք իսկի չին հարցնում,  
Չունքի իրանց ետենց ուփրո ոքուտ ե.  
(Դրուստ ին ասի, թե ոչով չե իմանում,  
Ես աշխարքում ով կաշիստե, ով կուտե):

Ափսուս, ափսուս, դուն միր գոված Սոլոլակ,  
Բուրժուեքի, աղա խալիսի արժանի,  
Ել ով պիտի շուք տա քու լին քուչեքին,  
Ճաշիր սարքե ու անհեսաբ խարջ անի:

Ցիս՝ վասիլի Մաթվեյիչս, քալսկի,  
Շատերի պես յիս ել խիստ իմ կուչ եկի,  
Հիմի ջոխով ու ես թափուր մաքերով  
Լենքն իմ չափում Սոլոլակի քուչեքի:



## ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՀՐԱԺԱՐԻՄՔԸ

Թող դժուխքում չդնջանա  
Սատանեքի մուռտար ձեռից,  
Ով հնարից առուտուրը  
Ու գուքանը մողա բերից:  
  
Պերվի գիլդի կուպեծ եյի,  
Հենց իմացա մարթ իմ դառի,  
Մաղաղիես, կապիտալս  
Մինձանում եր ամեն տարի:

Երկու գուքան ջուգ ունեյի,  
Մեկն ել մե մինձ քարվանսարա.  
Տնիրը խո... ինչքան գուզիք,  
Վուրը բան եր, գիփ յիս առա:  
  
Դիփ ինձ եյին մինձ մարթ ջոգում,  
Լավ-լավ տիղիր յիս եյի զավթում.  
Իմ ասածը միշտ զակոն եր,  
Խալիր մենակ ինձ եր հավտում:

Ո՞վ կանար ինձ հակառակիփ,  
Գանա քանի՞ դրլուխ ուներ,  
Փեշաքավուրն ով եր ինձ մոդ,  
Նա ինչ դյաղա, նա ում շուն եր:

Կնիկ ուղեցի վունցոր մարալ,  
Վըրեն բլոմա փուղ ու բաժինք.  
Հենց գիգեյի մարթ ու կնիկը  
Թաքավուրի կինք կու քաշինք:

Ամա հետի բան պատահից,  
 Վուր չխացանք, թե վունց ելավ.  
 Բեռլյուցին մերաշ տրաքից  
 Ու միր գլխին թափից սելավ:  
  
 Վաճառական կլասի համա  
 Դա մի ցավ եր, խողեր, չումա.  
 Ել միր ճրաքը ինչկի լուսը  
 Լուս չե տալու, նա հանգչում ա:  
  
 Մե ումիկ եր միզ մընացի,  
 Հավառում եյինք ինչոք «ՆեՊ»-ին,  
 Կարծում եյինք նըրա ահից  
 Ել չին դիբչի մերոնց քեփին:  
  
 Ամա «ՆեՊ»-ն ել դալր գուս եկավ,  
 Կուպեծներուս նա ել խափից.  
 Սառ ջուր ածից միր զլմներուն  
 Ու դիփունանց մազեն կապից:  
  
 Երնեկ յիս ել ժամանակին  
 Մե փեշակի տեր եյի դառի  
 Ու մասխարա չշառնայի  
 Եսորվա միր պրոլետարի:  
  
 Թե չե ինչ ե իմ հան եսոր,  
 Վուչ տանտեր իմ, վուչ դուքանչի,  
 Համ ել ամեն մե լածիրակ  
 Ինձ սպեկոլյանտ պիտի կանչի:  
  
 ԶԵ, ախարտիք, ել չիմ կանա  
 Դիմսա եսքան թուք ու մուրին,  
 Նահլաթ դուքան հնարողին,  
 Նահլաթ նըրա առուտուրին:  
  
 Ել չիմ ուզում կուպեծ ըլիմ,  
 Վուչ տուն գուզիմ վուչ կնիկ-վուրթի.  
 Հերթիք ինչոք եսքան տարի  
 Գերի դառա սուտ ու դուրթի:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԺԵՐԵԿ
1. Մացակ Գուլազյան (առաջաբան Ա. Խանոյանի)	3
2. Յերկու խոսք . . . . .	6
3. Ֆաքսիմիլե . . . . .	7
4. Սպեկուլյանոր . . . . .	9
5. Պրոլետարի դիկտատուրա . . . . .	12
6. Եգեղեցին կուտրացավ . . . . .	14
7. Շուռ տված աշխարքը . . . . .	17
8. Փոկուգնիկը . . . . .	19
9. Պրոֆեսիոնալ սայուզը . . . . .	21
10. Նուր մոդնի հարսանիքը . . . . .	23
11. Երեզ ու եսոր . . . . .	25
12. Շատերից մեկը . . . . .	27
13. Վունց եյին դառնում խաղեյին . . . . .	30
14. Տանտիբով գանգար . . . . .	31
15. Զախարիչի ոջախրը . . . . .	33
16. Խաղեյինի լավությունը . . . . .	36
17. Կուպեծն ու նեպը . . . . .	38
18. Տերտերն ու Մարտուր . . . . .	39
19. Սովետիզացիա . . . . .	42
20. Եփրեմիկերդի . . . . .	43
21. Բուրժուեն ու աստուծը . . . . .	45
22. Պրիկաշչիկն ու խաղեյինը . . . . .	47

23.	Սարքիս աղայի կտակը	.	.	.	.	.	49
24.	Տերտերի գանգատը	.	.	.	.	.	50
25.	Տերտերը ժամում ու ռեստորանում	.	.	.	.	.	52
26.	Աղալոյի երազը	.	.	.	.	.	56
27.	Միք դաշեքը	.	.	.	.	.	59
28.	Աշխարքի բանը	.	.	.	.	.	60
29.	Բոլշեիզմը Թիֆլիզում	.	.	.	.	.	61
30.	Դիմունանց սեկրետը	.	.	.	.	.	63
31.	Հեյ զիզի Սոլոլակ	.	.	.	.	.	67
32.	Վաճառականի հրաժարիմքը	.	.	.	.	.	69



26666

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.